Հավելված 4
«ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/01-1»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

# «ԲԵՐԴԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/01-1-1

ք. Բերդ «31» հունվարի 2020 թ.

«Բերդի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ -ը ի դեմս տնօրենի ժ/պ Հ. Ադամյանի, որը գործում է «Բերդի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ԱՁ Արմինե Սարգսյանը, ի դեմս ձեռնարկատեր Արմինե Սարգսյանի, որը գործում է պետական ռեգիստրի վկայականի հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից

ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **2703825 (երկու միլիոն յոթ հարյուր երեք հազար ութ հարյուր քսանհինգ)** ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _______ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

---

[19] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 6_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

«Բերդի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ

Տավուշի մարզ, ք.Բերդ, Ա. Մանուկյան,25

Բանկ «Արդշինբանկ»ՓԲԸ «Տավուշ» մ/ճ

Հ/Հ 2477800186580010

ՀՎՀՀ 07806692

տնօրենի ժ/պ՝ Հ. Աղամյան

-----------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

Արմինե Սարգսյան ԱՁ

Տավուշի մարզ, գ. Չինչին, 2-րդ փող.,13

Բանկ «ԱԿԲԱ –Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ «Բերդ» մ/ճ

Հ/Հ 220289672523000

ՀՎՀՀ 70995964

ձեռնարկատեր՝ Արմինե Սարգսյան

-----------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը* | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 1 | 33661121 | Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid 75մգ | Տակեդա ՍՊԸ Գերմանիա | Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid դեղահատ 75մգ | դ/հատ | 21 | 10500 | 500 | ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, Մաշտոց 90-15 | 500 | 2020թ. ընթացքում՝ յուրաքանչյուր անգամ պատվիրատուից պատվեր ստանալուց հետո 5 աշխատաքնային օրվա ընթացքում՝ գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան: |
| 2 | 33661121 | Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid 100մգ | Բայեր Քոնսյումեր Քեյեր ՍՊԸ Շվեցարիա | Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid դեղահատ 100մգ | դ/հատ | 50 | 25000 | 500 | | 500 | |
| 3 | 33661121 | Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid 500մգ | Բարիսովսկի Կոմբինատ Բելոռուսիա | Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid դեղահատ 500մգ | դ/հատ | 8 | 1600 | 200 | | 200 | |
| 4 | 33631310 | Դիկլոֆենակ diclofenac 50մգ | Հեմոֆարմ Սերբիա | Դիկլոֆենակ diclofenac դեղահատ 50մգ | դ/հատ | 20 | 20000 | 1000 | | 1000 | |
| 5 | 33631310 | Դիկլոֆենակ diclofenac 25 մգ/մլ, 3մլ | Հեմոֆարմ Սերբիա | Դիկլոֆենակ diclofenac լուծույթ ներարկման 25 մգ/մլ, 3մլ | ամպուլ | 110 | 11000 | 100 | | 100 | |
| 6 | 33631290 | Իբուպրոֆեն ibuprofen 200մգ | Բարիսովսկի Կոմբինատ Բելոռուսիա | Իբուպրոֆեն ibuprofen դեղահատ 200մգ | դ/հատ | 7 | 3500 | 500 | | 500 | |
| 7 | 33631290 | Իբուպրոֆեն ibuprofen 400մգ | Հեմոֆարմ Սերբիա | Իբուպրոֆեն ibuprofen դեղահատ 400մգ | դ/հատ | 25 | 12500 | 500 | | 500 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 33631290 | Իբուպրոֆեն ibuprofen 600մգ | Ֆ ար մ ս տան դ ար տ- Լ Ե կ ս ր Ե ս տվ | Իբուպրոֆեն ibuprofen դեղահատ 600մգ | դ/հատ | 110 | 22000 | 200 | | 200 | |
| 9 | 33631290 | Իբուպրոֆեն ibuprofen 200մգ/5մլ | Մ Ե դ ի կ ա լ Հ ո ր զ ո Ն Ս Պ Ը Հ այ աս տան | Իբուպրոֆեն ibuprofen լուծույթ ներքին ընդունման, 200մգ/5մլ | հատ | 1800 | 36000 | 20 | | 20 | |
| 11 | 33661122 | Պարացետամոլ, Paracetamol, 500 մգ | Ֆ ար մ ս տան դ ար տ- Լ Ե կ ս ր Ե ս տվ [illegible] | Պարացետամոլ, Paracetamol, դեղահատ 500 մգ | դ/հատ | 6 | 3000 | 500 | | 500 | |
| 12 | 33631300 | Կետոպրոֆեն ketoprofen, 50մգ | Ս ան տո զ Ս Պ Ը Ս Լ ո վ ակ ի ա | Կետոպրոֆեն ketoprofen, դեղապատիճ, 50մգ | դ/պատ ճ | 68 | 6800 | 100 | | 100 | |
| 14 | 33661153 | Դեքսամեթազոն dexamethasone 1մգ/մլ | Ռո մ ֆ ար մ Ս Պ Ը [illegible] | Դեքսամեթազոն dexamethasone ակնակաթիլներ 1մգ/մլ | հատ | 650 | 13000 | 20 | | 20 | |
| 15 | 33611200 | Լոպերամիդ Loperamide 2մգ | Ար փի մ Ե դ Ս Պ Ը [illegible] | Լոպերամիդ Loperamide դեղահատ 2մգ | դ/հա տ | 13 | 6500 | 500 | | 500 | |
| 18 | 33651110 | Ամպիցիլին ampicillin 1գ | Ս ան տո զ Ս Պ Ը Ս Լ ո վ ակ ի ա | Ամպիցիլին ampicillin դեղափոշի ներարկման լուծույթի 1000մգ | սրվա կ | 120 | 12000 | 100 | | 100 | |
| 19 | 33651111 | Ամօքսիցիլին amoxicillin 250մգ | Տ ր ո ժ Ս Պ Ը Գ Ե ր մ ան ի ա | Ամօքսիցիլին amoxicillin դեղապատիճ 250մգ | դ/պատ ճ | 35 | 17500 | 500 | | 500 | |
| 20 | 33651111 | Ամօքսիցիլին amoxicillin 500մգ | Աս տԵ ր ի ա Ս Պ Ը Կ ո ր Ե ա | Ամօքսիցիլին amoxicillin դեղապատիճ 500մգ | դ/պատ ճ | 48 | 24000 | 500 | | 500 | |
| 21 | 33651112 | Ամօքսիցիլին , քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid 500մգ+125մգ | Աս տԵ Լ Լ աս Ս Պ Ը Ն ի դ Ե ռ Լ ան դ ի ա | Ամօքսիցիլին , քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid դեղահատ 500մգ+125մգ | դ/հա տ | 180 | 90000 | 500 | | 500 | |
| 22 | 33651112 | Ամօքսիցիլին, քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid 125մգ/5մլ+31,25մգ/5մլ | Գ Լ աս կ ո Ս մ ի տ Կ Լ այ Ն Թ ր Ե յ դ ի ն գ Փ Բ Ը Ռ Դ | Ամօքսիցիլին, քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 125մգ/5մլ+31,25մգ/5մլ | հատ | 2650 | 132500 | 50 | | 50 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 23 | 33651112 | Ամօքսիցիլին, քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid 250մգ/5մլ+ 62,5մգ/5մլ | ԼԵԿ ՍՊԸ Սլովակիա | Ամօքսիցիլին, քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 250մգ/5մլ+ 62,5մգ/5մլ | հատ | 3490 | 174500 | 50 | | 50 | |
| 24 | 33651115 | Ցեֆալեքսին cefalexin 500մգ | Բարիսովսկի Կոմբինատ Բելոռուսի | Ցեֆալեքսին cefalexin դեղապատիճ 500մգ | դ/պտճ | 50 | 25000 | 500 | | 500 | |
| 25 | 33651125 | Ազիթրոմիցին azithromycin 250մգ | Բարիսովսկի Կոմբինատ Բելոռուսիա | Ազիթրոմիցին azithromycin դեղապատիճ 250մգ | դ/պտճ | 241 | 120500 | 500 | | 500 | |
| 26 | 33651125 | Ազիթրոմիցին azithromycin 500մգ | Բարիսովսկի Կոմբինատ Բելոռուսիա | Ազիթրոմիցին azithromycin դեղապատիճ 500մգ | դ/պտճ | 500 | 150000 | 300 | | 300 | |
| 28 | 33691176 | Դօքսիցիկլին doxycycline 100մգ | Բարիսովսկի Կոմբինատ Բելոռուսիա | Դօքսիցիկլին doxycycline դեղապատիճ 100մգ | դ/պտճ | 13 | 6500 | 500 | | 500 | |
| 29 | 33691112 | Մետրոնիդազոլ, metronidazole 500մգ | Տակեդա Ֆարմա ՍՊԸ Դանիա | Մետրոնիդազոլ, metronidazole դեղահատ 500մգ | դ/հատ | 55 | 27500 | 500 | | 500 | |
| 30 | 33651128 | Նիտրոֆուրանտոյին Nitrofurantoin 100մգ | Բարիսովսկի Կոմբինատ Բելոռուսի... | Նիտրոֆուրանտոյին Nitrofurantoin դեղահատ 100մգ | դ/հատ | 100 | 50000 | 500 | | 500 | |
| 31 | 33651129 | Կլարիթրոմիցին, clarithromycin 500 մգ | Աստերիա ՍՊԸ Կորեա | Կլարիթրոմիցին, clarithromycin դեղահատ 500 մգ | դ/հատ | 420 | 84000 | 200 | | 200 | |
| 32 | 33651131 | Սուլֆամեթօքսազոլ, տրիմեթոպրիմ Sulfamethoxazole, trimethoprim 400մգ + 80մգ | Պոլֆա ՍՊԸ Լեհաստան | Սուլֆամեթօքսազոլ, տրիմեթոպրիմ Sulfamethoxazole, trimethoprim, դեղահատ 400մգ + 80մգ | դ/հատ | 40 | 40000 | 1000 | | 1000 | |
| 33 | 33651131 | Սուլֆամեթօքսազոլ, տրիմեթոպրիմ Sulfamethoxazole, trimethoprim, 200մգ/5մլ+40մգ/5մլ | Մեդանա Ֆարմա ՍՊԸ Լեհաստան | Սուլֆամեթօքսազոլ, տրիմեթոպրիմ Sulfamethoxazole, trimethoprim, դեղակախույթ ներքին ընդունման 200մգ/5մլ+40մգ/5մլ 100մլ | հատ | 2100 | 42000 | 20 | | 20 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 34 | 33651134 | Ցիպրոֆլօքսացին ciprofloxacin 500մգ | Բարիսովսկի Կոմբինատ Բելոռուսիա | Ցիպրոֆլօքսացին ciprofloxacin դեղահատ 500մգ | դ/հատ | 45 | 22500 | 500 | | 500 | |
| 35 | 33651138 | Լևոֆլօքսացին, Levofloxacin 250մգ | Դենկ ՍՊԸ Գերմանիա | Լևոֆլօքսացին, Levofloxacin դեղահատ 250մգ | դ/հատ | 345 | 172500 | 500 | | 500 | |
| 36 | 33651148 | Կլոտրիմազոլ, clotrimazole 10մգ/գ | Արփիմեդ ՍՊԸ Հայաստան | Կլոտրիմազոլ, clotrimazole նրբաքսուք հեշտոցային 10մգ/գ 20գ ալյումինե պարկում | հատ | 250 | 5000 | 20 | | 20 | |
| 37 | 33651150 | Ֆլուկոնազոլ fluconazole, 50մգ | Արփիմեդ ՍՊԸ Հայաստան | Ֆլուկոնազոլ fluconazole, դեղապատիճ, 50մգ | դ/պատ ճ | 75 | 7500 | 100 | | 100 | |
| 38 | 33651150 | Ֆլուկոնազոլ fluconazole, 150մգ | Արփիմեդ ՍՊԸ Հայաստան | Ֆլուկոնազոլ fluconazole, դեղապատիճ, 150մգ | դ/պատ ճ | 500 | 50000 | 100 | | 100 | |
| 39 | 33651170 | Ացիկլովիր, acyclovir 200մգ | ԲելՄեդ Պրեպարատի ՍՊԸ Բելառուսիա | Ացիկլովիր, acyclovir դեղահատ 200մգ | դ/հատ | 21 | 10500 | 500 | | 500 | |
| 40 | 33621680 | Պրոպրանոլոլ propranolol 40 մգ | Զդարովիա ՍՊԸ Ուկրաինա | Պրոպրանոլոլ propranolol դեղահատ, 40 մգ | դ/հատ | 9.6 | 4800 | 500 | | 500 | |
| 41 | 33621720 | Բիսոպրոլոլ bisoprolol 5մգ | ՌեկպլեկՖարմ ՍՊԸ Մակեդոնիա | Բիսոպրոլոլ bisoprolol դեղահատ 5մգ | դ/հատ | 65 | 32500 | 500 | | 500 | |
| 42 | 33621720 | Բիսոպրոլոլ bisoprolol 10մգ | Մերկ ՍՊԸ Գերմանիա | Բիսոպրոլոլ bisoprolol դեղահատ 10մգ | դ/հատ | 115 | 57500 | 500 | | 500 | |
| 43 | 33621360 | Գլիցերիլ (գլիցերիլ տրինիտրատ) glyceryl (glyceryl trinitrate) 0,5մգ | Տեխնոլոգ ՍՊԸ Ուկրաինա | Գլիցերիլ (գլիցերիլ տրինիտրատ) glyceryl (glyceryl trinitrate)դեղահատեր, ենթալեզվային, 0,5մգ | դ/հատ | 9.25 | 4625 | 500 | | 500 | |
| 44 | 33621370 | Իզոսորբիդի դինիտրատ, Isosorbide Dinitrate 10մգ | ՇվարցՖարմ Գերմանիա | Իզոսորբիդի դինիտրատ, Isosorbide Dinitrate դեղահատ 10մգ | դ/հատ | 10 | 10000 | 1000 | | 1000 | |
| 45 | 33621730 | Վերապամիլ verapamil 80 մգ | Ալկալոիդ ՍՊԸ Մակեդոնիա | Վերապամիլ verapamil դեղահատ 80մգ | դ/հատ | 30 | 30000 | 1000 | | 1000 | |
| 46 | 33621380 | Դիգօքսին digoxin 0,25մգ | Զդորովիա ՍՊԸ Ուկրաինա | Դիգօքսին digoxin դեղահատ 0,25մգ | դ/հատ | 6.4 | 3200 | 500 | | 500 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 47 | 33621390 | Ամիոդարոն amiodarone 400մգ | Հինոին ՍՊԸ Հունգարիա | Ամիոդարոն amiodarone դեղահատ | դ/հատ | 190 | 95000 | 500 | | 500 | |
| 48 | 33621740 | Ամլոդիպին amlodipine 10մգ | Ռեկպլեկ Ֆարմ ՍՊԸ Մակեդոնիա | Ամլոդիպին amlodipine դեղահատ 10մգ | դ/հատ | 30 | 30000 | 1000 | | 1000 | |
| 49 | 33621760 | Էնալապրիլ enalapril 10մգ | Բարիսովսկի Կոմբինատ Բելորուսիա | Էնալապրիլ enalapril դեղահատ 10մգ | դ/հատ | 8 | 8000 | 1000 | | 1000 | |
| 50 | 33621510 | Կապտոպրիլ captopril 25մգ | Բարիսովսկի Կոմբինատ Բելորուսիա | Կապտոպրիլ captopril դեղահատ 25մգ | դ/հատ | 5 | 5000 | 1000 | | 1000 | |
| 51 | 33621580 | Հիդրոքլորոթիազիդ hydrochlorothiazide, 50մգ | Բարիսովսկի Կոմբինատ Բելորուսիա | Հիդրոքլորոթիազիդ hydrochlorothiazide, դեղահատ, 50մգ | դ/հատ | 15 | 7500 | 500 | | 500 | |
| 52 | 33621490 | Մեթիլդոպա methyldopa 250մգ | Էգիս ՍՊԸ Հունգարիա | Մեթիլդոպա methyldopa դեղահատ 250մգ | դ/հատ | 8 | 800 | 100 | | 100 | |
| 53 | 33691203 | Լոզարտան losartan 25մգ | Կրկ Ֆարմա ՍՊԸ ՌԴ | Լոզարտան losartan դեղահատ 25մգ | դ/հատ | 55 | 27500 | 500 | | 500 | |
| 54 | 33621710 | Ատենոլոլ, atenolol 50 մգ | Բարիսովսկի Կոմբինատ Բելորուսիա | Ատենոլոլ, atenolol դեղահատ 50 մգ | դ/հատ | 7 | 2100 | 300 | | 300 | |
| 55 | 33621590 | Ֆուրոսեմիդ furosemide, 40մգ | Բարիսովսկի Կոմբինատ Բելորուսիա | Ֆուրոսեմիդ furosemide, դեղահատ 40մգ | դ/հատ | 5 | 5000 | 1000 | | 1000 | |
| 56 | 33621620 | Սպիրոնոլակտոն, Spironolactone, դեղահատ 25 մգ | Գեդեոն Ռիխտեր ՍՊԸ Հունգարիա | Սպիրոնոլակտոն, Spironolactone, դեղահատ 25 մգ | դ/հատ | 42.5 | 21250 | 500 | | 500 | |
| 57 | 33621620 | Սպիրոնոլակտոն, Spironolactone, դեղահատ 50 մգ | Գեդեոն Ռիխտեր ՍՊԸ Հունգարիա | Սպիրոնոլակտոն, Spironolactone, դեղահատ 50 մգ | դ/հատ | 78 | 39000 | 500 | | 500 | |
| 58 | 33621140 | Կլոպիդոգրել clopidogrel դեղահատ 75մգ | Ռեկպլեկ Ֆարմ ՍՊԸ Մակեդոնիա | Կլոպիդոգրել clopidogrel դեղահատ 75մգ | դ/հատ | 305 | 305000 | 1000 | | 1000 | |
| 59 | 33621410 | Սիմվաստատին Simvastatin | Դենկ Ֆարմա ՍՊԸ Գերմանիա | Սիմվաստատին Simvastatin դեղահատ | դ/հատ | 133 | 133000 | 1000 | | 1000 | |
| 60 | 33631210 | Բետամեթազոն betamethasone քսուք 1մգ/գ | Արփիմեդ ՍՊԸ Հայաստան | Բետամեթազոն betamethasone քսուք 1մգ/գ 15գ ալյումինե | հատ | 1050 | 10500 | 10 | | 10 | |
| 61 | 33621640 | Հիդրոկորտիզոն hydrocortisone 10մգ/գ | Արփիմեդ ՍՊԸ Հայաստան | Հիդրոկորտիզոն hydrocortisone նրբաքսուք, 10մգ/գ 30գ.ալյումինե պարկուճ | հատ | 300 | 3000 | 10 | | 10 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 62 | 33611100 | Օմեպրազոլ omeprazole, 40մգ | Սանդոս ՍՊԸ Սլովենիա | Օմեպրազոլ omeprazole, դեղապատիճ , 40մգ | դ/պտ ճ | 295 | 295000 | 1000 | | 1000 | |
| 63 | 33611120 | Ֆամոտիդին famotidine 20մգ | Բարիսովսկի Կոմբինատ Բելոռուսիա | Ֆամոտիդին famotidine դեղահատ 20մգ | դ/հա տ | 17.5 | 8750 | 500 | | 500 | |
| 64 | 33691214 | Ռանիտիդին ranitidine 150մգ | Ջղարովիա ՍՊԸ Ուկրաինա | Ռանիտիդին ranitidine դեղահատ 150մգ | դ/հա տ | 20 | 10000 | 500 | | 500 | |
| 65 | 33611110 | Ալյումինիումի հիդրօքսիդ, մագնեզիումի հիդրօքսիդ Aluminium Hydroxide, Magnesium Hydroxide 400մգ+400մգ | Սանոֆի - Ավենտիս ՍՊԸ Ֆրանսիա | Ալյումինիումի հիդրօքսիդ, մագնեզիումի հիդրօքսիդ Aluminium Hydroxide, Magnesium Hydroxide դեղահատ ծամելու 400մգ+400մգ | դ/հա տ | 45 | 22500 | 500 | | 500 | |
| 66 | 33651170 | Ացիկլովիր aciclovir ակնաքսուք 30մգ/գ | Սինթեզ ՍՊԸ ՌԴ | Ացիկլովիր aciclovir ակնաքսուք 30մգ/գ | հատ | 400 | 4000 | 10 | | 10 | |
| 67 | 33651125 | Ազիթրոմիցին azithromycin 1.5% | Լիկվոր ՍՊԸ Հայաստան | Ազիթրոմիցին azithromycin ակնակաթիլներ, 1.5% | հատ | 1990 | 19900 | 10 | | 10 | |
| 68 | 33631170 | Տետրացիկլին tetracycline, ակնաքսուք, 10մգ/գ | Գլասկո Վելկո Պրոդակշիոն Ֆրանսիա | Տետրացիկլին tetracycline, ակնաքսուք, 10մգ/գ | հատ | 820 | 8200 | 10 | | 10 | |
| 69 | 33651134 | Ցիպրոֆլօքսացին ciprofloxacin 3մգ/մլ | Լիկվոր ՍՊԸ Հայաստան | Ցիպրոֆլօքսացին ciprofloxacin ակնակաթիլներ 3մգ/մլ | հատ | 700 | 7000 | 10 | | 10 | |
| 71 | 33671113 | Սալբուտամոլ (սալբուտամոլ սուլֆատ) salbutamol (salbutamol sulfate) 100մկգ/դեղաչափ | Գլասկո Վելկո Պրոդակշիոն Ֆրանսիա | Սալբուտամոլ (սալբուտամոլ սուլֆատ) salbutamol (salbutamol sulfate) ցողացիր շնչառման, դեղաչափավորված 100մկգ/դեղաչափ, 200 | հատ | 1950 | 39000 | 20 | | 20 | |
| 72 | 33671114 | Ամինոֆիլին, Aminophylline 150մգ | Բարիսովսկի Կոմբինատ Բելոռուսիա | Ամինոֆիլին, Aminophylline դեղահատ 150մգ | դ/հա տ | 5.3 | 5300 | 1000 | | 1000 | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 73 | 33611220 | Ներքին ընդունման ջրավերականգնիչ աղեր Oral Rehydration Salts | Օ ր ի ա ն Ֆ ա ր մ Ս Պ Ը Ֆ ի ն լ ա ն դ ի ա | Դեղափոշի ներքին ընդունման լուծույթի դեղափոշի, դեղաչափավորված 18.9գ փաթեթիկներ | հատ | 270 | 13500 | 50 | | 50 | | |
| | | Ընդամենը | | | | | 2703825 | | | | | |

* Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| | Արմինե Սարգսյան ԱՁ |
| «Բերդի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ | Տավուշի մարզ, գ. Չինչին, 2-րդ փող.,13 |
| Տավուշի մարզ, ք.Բերդ, Ա. Մանուկյան,25 | Բանկ «ԱԿԲԱ –Կրեդիտ Ագրիկոլ բանկ» |
| Բանկ «Արդշինբանկ»ՓԲԸ «Տավուշ» մ/ճ | ՓԲԸ «Բերդ» մ/ճ |
| Հ/Հ 2477800186580010 | Հ/Հ 220289672523000 |
| ՀՎՀՀ 07806692 | ՀՎՀՀ 70995964 |
| տնօրենի ժ/պ՝ Հ. Աղամյան | ձեռնարկատեր՝ Արմինե Սարգսյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելվ[illegible]
« 31 » հունվարի 2020 թ. կնքվ[illegible]
ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/01-1-1 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 33661121 | Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid 75մգ | | | | | | | | | | | | 10500 | 10500 |
| 2 | 33661121 | Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid 100մգ | | | | | | | | | | | | 25000 | 25000 |
| 3 | 33661121 | Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid 500մգ | | | | | | | | | | | | 1600 | 1600 |
| 4 | 33631310 | Դիկլոֆենակ diclofenac 50մգ | | | | | | | | | | | | 20000 | 20000 |
| 5 | 33631310 | Դիկլոֆենակ diclofenac 25 մգ/մլ, 3մլ | | | | | | | | | | | | 11000 | 11000 |
| 6 | 33631290 | Իբուպրոֆեն ibuprofen 200մգ | | | | | | | | | | | | 3500 | 3500 |
| 7 | 33631290 | Իբուպրոֆեն ibuprofen 400մգ | | | | | | | | | | | | 12500 | 12500 |
| 8 | 33631290 | Իբուպրոֆեն ibuprofen 600մգ | | | | | | | | | | | | 22000 | 22000 |
| 9 | 33631290 | Իբուպրոֆեն ibuprofen 200մգ/5մլ | | | | | | | | | | | | 36000 | 36000 |
| 11 | 33661122 | Պարացետամոլ, Paracetamol, 500 մգ | | | | | | | | | | | | 3000 | 3000 |
| 12 | 33631300 | Կետոպրոֆեն ketoprofen, 50մգ | | | | | | | | | | | | 6800 | 6800 |
| 14 | 33661153 | Դեքսամեթազոն dexamethasone 1մգ/մլ | | | | | | | | | | | | 13000 | 13000 |
| 15 | 33611200 | Լոպերամիդ Loperamide 2մգ | | | | | | | | | | | | 6500 | 6500 |
| 18 | 33651110 | Ամպիցիլին ampicillin 1գ | | | | | | | | | | | | 12000 | 12000 |
| 19 | 33651111 | Ամօքսիցիլին amoxicillin 250մգ | | | | | | | | | | | | 17500 | 17500 |
| 20 | 33651111 | Ամօքսիցիլին amoxicillin 500մգ | | | | | | | | | | | | 24000 | 24000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | 33651112 | Ամոքսիցիլին , քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid 500մգ+125մգ | | | | | | | | | | | | 90000 | 90000 |
| 22 | 33651112 | Ամոքսիցիլին, քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid 125մգ/5մլ+31,25մգ/5մլ | | | | | | | | | | | | 132500 | 132500 |
| 23 | 33651112 | Ամոքսիցիլին, քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid 250մգ/5մլ+ 62,5մգ/5մլ | | | | | | | | | | | | 174500 | 174500 |
| 24 | 33651115 | Ցեֆալեքսին cefalexin 500մգ | | | | | | | | | | | | 25000 | 25000 |
| 25 | 33651125 | Ազիթրոմիցին azithromycin 250մգ | | | | | | | | | | | | 120500 | 120500 |
| 26 | 33651125 | Ազիթրոմիցին azithromycin 500մգ | | | | | | | | | | | | 150000 | 150000 |
| 28 | 33691176 | Դոքսիցիկլին doxycycline 100մգ | | | | | | | | | | | | 6500 | 6500 |
| 29 | 33691112 | Մետրոնիդազոլ, metronidazole 500մգ | | | | | | | | | | | | 27500 | 27500 |
| 30 | 33651128 | Նիտրոֆուրանտոյին Nitrofurantoin 100մգ | | | | | | | | | | | | 50000 | 50000 |
| 31 | 33651129 | Կլարիթրոմիցին, clarithromycin 500 մգ | | | | | | | | | | | | 84000 | 84000 |
| 32 | 33651131 | Սուլֆամեթօքսազոլ, տրիմեթոպրիմ Sulfamethoxazole, trimethoprim 400մգ + 80մգ | | | | | | | | | | | | 40000 | 40000 |
| 33 | 33651131 | Սուլֆամեթօքսազոլ, տրիմեթոպրիմ Sulfamethoxazole, trimethoprim, 200մգ/5մլ+40մգ/5մլ | | | | | | | | | | | | 42000 | 42000 |
| 34 | 33651134 | Ցիպրոֆլօքսացին ciprofloxacin 500մգ | | | | | | | | | | | | 22500 | 22500 |
| 35 | 33651138 | Լևոֆլօքսացին, Levofloxacin 250մգ | | | | | | | | | | | | 172500 | 172500 |
| 36 | 33651148 | Կլոտրիմազոլ, clotrimazole 10մգ/գ | | | | | | | | | | | | 5000 | 5000 |
| 37 | 33651150 | Ֆլուկոնազոլ fluconazole, 50մգ | | | | | | | | | | | | 7500 | 7500 |
| 38 | 33651150 | Ֆլուկոնազոլ fluconazole, 150մգ | | | | | | | | | | | | 50000 | 50000 |
| 39 | 33651170 | Ացիկլովիր, acyclovir 200մգ | | | | | | | | | | | | 10500 | 10500 |
| 40 | 33621680 | Պրոպրանոլոլ propranolol 40 մգ | | | | | | | | | | | | 4800 | 4800 |
| 41 | 33621720 | Բիսոպրոլոլ bisoprolol 5մգ | | | | | | | | | | | | 32500 | 32500 |
| 42 | 33621720 | Բիսոպրոլոլ bisoprolol 10մգ | | | | | | | | | | | | 57500 | 57500 |
| 43 | 33621360 | Գլիցերիլ (գլիցերիլ տրինիտրատ) glyceryl (glyceryl trinitrate) 0.5մգ | | | | | | | | | | | | 4625 | 4625 |
| 44 | 33621370 | Իզոսորբիդի դինիտրատ, Isosorbide Dinitrate 10մգ | | | | | | | | | | | | 10000 | 10000 |
| 45 | 33621730 | Վերապամիլ verapamil 80 մգ | | | | | | | | | | | | 30000 | 30000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 46 | 33621380 | Դիգոքսին digoxin 0,25մգ | | | | | | | | | | | | 3200 | 3200 |
| 47 | 33621390 | Ամիոդարոն amiodarone 400մգ | | | | | | | | | | | | 95000 | 95000 |
| 48 | 33621740 | Ամլոդիպին amlodipine 10մգ | | | | | | | | | | | | 30000 | 30000 |
| 49 | 33621760 | Էնալապրիլ enalapril 10մգ | | | | | | | | | | | | 8000 | 8000 |
| 50 | 33621510 | Կապտոպրիլ captopril 25մգ | | | | | | | | | | | | 5000 | 5000 |
| 51 | 33621580 | Հիդրոքլորոթիազիդ hydrochlorothiazide, 50մգ | | | | | | | | | | | | 7500 | 7500 |
| 52 | 33621490 | Մեթիլդոպա methyldopa 250մգ | | | | | | | | | | | | 800 | 800 |
| 53 | 33691203 | Լոզարտան losartan 25մգ | | | | | | | | | | | | 27500 | 27500 |
| 54 | 33621710 | Ատենոլոլ, atenolol 50 մգ | | | | | | | | | | | | 2100 | 2100 |
| 55 | 33621590 | Ֆուրոսեմիդ furosemide, 40մգ | | | | | | | | | | | | 5000 | 5000 |
| 56 | 33621620 | Սպիրոնոլակտոն, Spironolactone, դեղահատ 25 մգ | | | | | | | | | | | | 21250 | 21250 |
| 57 | 33621620 | Սպիրոնոլակտոն, Spironolactone, դեղահատ 50 մգ | | | | | | | | | | | | 39000 | 39000 |
| 58 | 33621140 | Կլոպիդոգրել clopidogrel դեղահատ 75մգ | | | | | | | | | | | | 305000 | 305000 |
| 59 | 33621410 | Սիմվաստատին Simvastatin դեղահատ 20մգ | | | | | | | | | | | | 133000 | 133000 |
| 60 | 33631210 | Բետամեթազոն betamethasone քսուք 1մգ/գ | | | | | | | | | | | | 10500 | 10500 |
| 61 | 33621640 | Հիդրոկորտիզոն hydrocortisone 10մգ/գ | | | | | | | | | | | | 3000 | 3000 |
| 62 | 33611100 | Օմեպրազոլ omeprazole, 40մգ | | | | | | | | | | | | 295000 | 295000 |
| 63 | 33611120 | Ֆամոտիդին famotidine 20մգ | | | | | | | | | | | | 8750 | 8750 |
| 64 | 33691214 | Ռանիտիդին ranitidine 150մգ | | | | | | | | | | | | 10000 | 10000 |
| 65 | 33611110 | Ալյումինիումի հիդրօքսիդ, մագնեզիումի հիդրօքսիդ Aluminium Hydroxide, Magnesium | | | | | | | | | | | | 22500 | 22500 |
| 66 | 33651170 | Ացիկլովիր aciclovir ակնաքսուք 30մգ/գ | | | | | | | | | | | | 4000 | 4000 |
| 67 | 33651125 | Ազիթրոմիցին azithromycin 1.5% | | | | | | | | | | | | 19900 | 19900 |
| 68 | 33631170 | Տետրացիկլին tetracycline, ակնաքսուք, 10մգ/գ | | | | | | | | | | | | 8200 | 8200 |
| 69 | 33651134 | Ցիպրոֆլոքսացին ciprofloxacin 3մգ/մլ | | | | | | | | | | | | 7000 | 7000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 71 | 33671113 | Սալբուտամոլ (սալբուտամոլ սուլֆատ) salbutamol (salbutamol sulfate) 100մկգ/դեղաչափ | | | | | | | | | | | | 39000 | 39000 |
| 72 | 33671114 | Ամինոֆիլին, Aminophylline 150մգ | | | | | | | | | | | | 5300 | 5300 |
| 73 | 33611220 | Ներքին ընդունման ջրավերականգնիչ աղեր Oral Rehydration Salts | | | | | | | | | | | | 13500 | 13500 |

**ԳՆՈՐԴ**

«Բերդի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ
Տավուշի մարզ, ք.Բերդ, Ա. Մանուկյան,25
Բանկ «Արդշինբանկ»ՓԲԸ «Տավուշ» մ/ճ
Հ/Հ 2477800186580010
ՀՎՀՀ 07806692
տնօրենի ժ/պ՝ Հ. Ադամյան

------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

Արմինե Սարգսյան ԱՁ
Տավուշի մարզ, գ. Չինչին, 2-րդ փող.,13
Բանկ «ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ «Բերդ» մ/ճ
Հ/Հ 220289672523000
ՀՎՀՀ 70995964
ձեռնարկատեր՝ Արմինե Սարգսյան

------------------------------
/ստորագրություն/ Կ.Տ